

շուե՞ր ձայն մը՝ որով մին միւսը կը կոչէր, վասնզի ժայռին մեջ աչ ու ձախ դիպք մը? պատահած էր: Եւ պեղումին օրը, գործաւորները կը զարնէին մին միւսին դիմաց, քարհաս քարհասի դեմ: Ջուրերը այն ասէն սարխարէն վազեցին աւազանը, գրեթէ հազար երկու հարիւր կանգուն երկայնութեան: Գործաւորներու զխումն վրայ ժայռին բարձրորդիւնը մեկ կանգունի չափ էր:»

## 2. Սելովամը քրիստոնէական ուխտատեղի, Եւ անոր եկեղեցին .

Սելովամի մէջ կատարուած էր ի ծնէ կուրիւն բժշկութեան հրաշքը, ըստ Աւետարանի: Այն օրէն ժողովրդական դարձան նոյն աւազանի ջրերը և ստացան անոնք բուժիչ զօրութիւն մը՝ հաւատքով մօտեցողներուն համար: Քրիստոնէական առաջին դարերուն իսկ, հոն տակաւին եկեղեցի չհաստատուած, աչազուրկներ ամէն կողմէ կը դիմէին բժշկութիւն գտնելու համար, մասնաւորապէս Եգիպտոսէն եկողներ կը վկայուի թէ Սելովամ կ'իջնէին նոյն նպատակաւ: Երուսաղէմի Սոփրոնիոս հայրապետը իր Կիւրոս և Յովհաննէս մարտիրոսներու վկայարանութեան մէջ կը յիշատակէ թէ նոյն վկաները տեսիլքով մը թելագրած են Ս. Մինաս Եգիպտոսի զօրականը և վերին Եգիպտոսի վանականներէն մին որ Սելովամի ջուրերուն զիմեն աչաց բժշկութեան համար: Ժողովուրդը մեծ հաւատք ունէր այդ ջուրերու մասին, այնպէս որ Տնօրինական Ս. Տեղերը այցելող ուխտաւորներ երբեք զանց չէին ըներ Սելովամը: Ինչպէս որ Ս. Տեղերու վրայ կանուխէն եկեղեցիներ շինուեցան, հոս ալ հին դարերու մէջ կառուցուած կը տեսնուի հոյակապ եկեղեցի մը, որուն կամարներուն տակ կը պայծառանար Սելովամի աւազանը: Հնախօսներու կարծիքը կը տարբերի նոյն եկեղեցիի շինութեան թուականի մասին: Ոմանք կը կարծեն թէ Եւզոպիա թագուհին շինած է զայն Երուսաղէմի պարիսպները շինելուն աթիւ. այլք աւելի կանուխ կը նկատեն նոյնին շինութիւնը. ուղեգիրներ որոշ չեն յիշատակեր հիմնադիրը: Երուսաղէմի տօնակարգը, որ վրացերէն ձեռագրի մը մէջ գտնուած և Goussen Գերմանացին հրատարակած է, ունի հետեւեալ ծանօթութիւնը « 17 Ապրիլ, ի Սելովամ յիշտակ Վաղնէսիանոս կայսեր »: Յուլիանոս Ուրացոյցէն